ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ - - -

ԾՐԱԳԻՐ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան

«14» նոյեմբեր 2021թ.

Ծրագիր

«Ճանապարհ դեպի լույս» խորագրով միջոցառումների շարք՝ նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին

Միջոցառման իրականացման վայրը՝ «Ընտանիք» կենտրոն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունք, Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 և Շիրակի մարզի Աշոցքի միջնակարգ դպրոցներ, Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի, Արագածոտնի մարզի Հայոց Այբուբենի հուշարձան՝ Տառերի պուրակ և Սաղմոսավանք, Մատենադարան և Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:

Միջոցառման սկիզբը՝ մայիս, 2021թ.
Միջոցառման ավարտը՝ նոյեմբեր, 2021թ.

Միջոցառման համառոտ նկարագրությունը

1-ին փուլ՝ *ՀՀ մարզերի և Ջավախքի կրթամշակութային կենտրոնի դեռահասների համար կհայտարարվի Հայոց այբուբենին նվիրված ստեղծագործական մրցույթ՝ ըստ կիրառական արվեստի ճյուղերի, կկազմակերպվի սեմինար և ընթերցումներ «Ալիշանի կյանքը, գրական և գիտական գործունեությունը» խորագրով:*

2-րդ փուլ՝

- ✓ կամփոփվի ստեղծագործական մրցույթի արդյունքները /ըստ մշակված ընթացակարգի/,
- ✓ Թարգմանչաց տոնին ընդառաջ կկազմակերպվի այցելություն Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 և Շիրակի մարզի Աշոցքի միջնակարգ դպրոցներ, կանցկացվի «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով համատեղ գրական-գեղարվեստական միջոցառում, կկազմակերպվի ստեղծագործական մրցույթի և «Ընտանիք» կենտրոնի կիրառական արվեստի խմբակների սաների աշխատանքների ցուցադրություն, էքսկուրսիա Լոռու մարզի պատմամշակութային վայրեր,
- ✓ կենտրոնի սաների և Անի թաղամասի բնակիչների համար Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցում հարմոնիումի նվագակցությամբ կանցկացվի արարողակարգ՝ «Ալիշանի աղոթքն առ Աստված»:

Եզրափակիչ փուլ՝ ծրագիրը կամփոփվի «Ընտանիք» կենտրոնում ստեղծագործական մրցույթի լավագույն աշխատանքների ցուցադրմամբ, «Ճանապարհ դեպի լույս» խորագրով գեղարվեստական միջոցառմամբ և պարգևատրմամբ: Ստեղծագործական մրցույթի հաղթողները, ակտիվ մասնակիցները՝ որպես մրցանակ, կայցելեն Հայոց Այբուբենի հուշարձան՝ Տառերի պուրակ և Սաղմոսավանք, Մատենադարան, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:

Միջոցառումների նպատակն է՝ արժևորել Թարգմանչաց տոնի կարևորությունը և Ղևոնդ Ալիշանի թողած գրական ժառանգությունը, ներկայացնել գրերի գյուտի անհրաժեշտությունն ազգային ինքնության պահպանման գործում, դեռահասների մոտ ձևավորել քրիստոնեական արժեքների նկատմամբ հարգանք:

Խնդիրներն են՝ դեռահասների մեջ սերմանել հետաքրքրություն ընթերցանության և Ալիշանի գրական ժառանգության հանդեպ, սերունդներին կրթել Սրբոց թագմանչաց վարդապետների օրինակով: Մասնակիցներին ծանոթացնել պատմամշակութային վայրերի պատմությանը՝ կարևորելով մշակութային և հոգևոր արժեքների դերը հայապահպանման գործում:

Միջոցառումները կանցկացվեն մայիս-նոյեմբեր ամիսներին՝ «Ընտանիք» կենտրոնում՝ 2օր, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում՝ 1օր, Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունքում՝ 1օր, Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցում՝ 1օր, Աշոցք՝ 1 օր, Վանաձորում՝ 1օր, Հայոց Այբուբենի հուշարձան՝ Տառերի պուրակում, Սաղմոսավանքում, Մատենադարանում և Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում՝ 1օր:

ԾՐԱԳԻՐ

Միջոցառման նկարագրությունը

• ***Միջոցառման հիմնավորումը***՝ *միջոցառման իրականացման անհրաժեշտությունը.*

Մասնակիցները Թարգմանչաց տոնի և Ղևոնդ Ալիշանի գրական ժառանգության իմացությամբ, կկարևորեն հայ մեծերի, ազգային գրերի, մշակութային և հոգևոր արժեքների դերը հայապահպանման գործում: Ստեղծագործական մրցույթի մասնակցությամբ դեռահասները հնարավորություն կունենան ուսումնասիրելու հայոց գրերի ստեղծման ակունքները և մասնագիտական կարողությունների օգտագործմամբ ստեղծել թեմատիկ գործեր: Դեռահասները կծանոթանան պատմամշակութային վայրերի պատմությանը՝ կարևորելով ազգային արժեքների պահպանումն ու զարգացումը:

• ***Միջոցառման նպատակները և խնդիրները.***

Կարևորել Թարգմանչաց տոնի կարևորությունը, սաների մոտ ձևավորել քրիստոնեական արժեքների նկատմամբ հարգանք, սաներին ծանոթացնել Ղևոնդ Ալիշանի կյանքին, գրական և գիտական գործունեությանը և հարուստ գրական ժառանգությանը: Հայ ժողովրդի հերոսական անցյալի օրինակով՝ Ալիշանի ազատասիրական և հայրենասիրական ոգու շունչն ու կորովը փոխանցել մատաղ սերնդին: Հարգանքի տուրք մատուցել «Քաղցրանվագ Նահապետին», խթանել համագործակցությունը ծրագրում ընդգրկված կազմակերպությունների հետ, սաներին հաղորդակից դարձնել պատմամշակութային արժեքներին, կարևորել արտադպրոցական կրթության և դաստիարակության դերը:

Միջոցառման կառուցվածքը

• *Միջոցառման իրականացման համար նախատեսված աշխատանքները՝ նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամփոփումը:*

Նախապատրաստում՝ մրցույթի և միջոցառումների համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների, համագործակցող կազմակերպությունների հետ պայմանավորվածության, տրանսպորտային ծառայության ձեռքբերում, մասնակիցների ընտրություն, գործուղման կազմակերպում, մրցույթի, ցուցահանդեսի, գեղարվեստական միջոցառումների ժամանակացույցի և ընթացակարգերի մշակում, հարցախույզ թերթիկների պատրաստում, նկարահանող և տեսաֆիլմ պատրաստող կազմակերպության ընտրություն:

Իրականացում՝

1-ին փուլ՝ Շիրակի մարզի 13-18 տարեկան դեռահասների համար Հայոց այբուբենին նվիրված ստեղծագործական մրցույթի հայտարարում՝ ըստ կիրառական արվեստի ճյուղերի, հայագիտական կենտրոնում սեմինարի և Գրողների միությունում «Ալիշանի կյանքը, գրական և գիտական գործունեությունը» խորագրով ընթերցումների կազմակերպում:

2-րդ փուլ՝

- ✓ ստեղծագործական մրցույթի արդյունքների ամփոփում,
- ✓ Թարգմանչաց տոնին ընդառաջ այցելություն Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 և Աշոցքի միջնակարգ դպրոցներ, «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով համատեղ գրական-գեղարվեստական միջոցառման անցկացում, ստեղծագործական մրցույթի և «Ընտանիք» կենտրոնի կիրառական արվեստի խմբակների սաների աշխատանքների ցուցադրություն, ճանաչողական էքսկուրսիա Լոռու մարզի պատմամշակութային վայրեր,
- ✓ կենտրոնի սաների և Անի թաղամասի բնակիչների համար Գյումրու Սբ. Հակոբ Մծբնեցի եկեղեցում հարմոնիումի նվագակցությամբ արարողակարգի անցկացում՝ «Ալիշանի աղոթքն առ Աստված»:

Արդյունքների ամփոփում. ստեղծագործական մրցույթի լավագույն աշխատանքների ցուցադրում, ստեղծագործական մրցույթի հաղթողներին պատվոգրերի հանձնում և որպես մրցանակ՝ կկազմակերպվի այց Հայոց Այբուբենի հուշարձան՝ Տառերի պուրակ, Մատենադարան, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Համագործակցող կազմակերպություններին շնորհակալագրերի հանձնում և «Ճանապարհ դեպի լույս» խորագրով գեղարվեստական համատեղ միջոցառման անցկացում: Հարցախույզ թերթիկների լրացում, դրանց և համայնքներից արձագանքների հիման վրա վերլուծության կազմակերպում: Տեսանյութի և տեղեկատուի պատրաստում:

Գործողությունների ծրագիրը, գործողությունների ժամանակացույցը

Հ/Հ	Գործողությունների ծրագրերը	Գործողությունների ժամանակացույցը
1.	Մրցույթի և սեմինարի համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների, համագործակցող կազմակերպությունների հետ պայմանավորվածությունների ձեռքբերում	մայիս
2.	Մասնակիցների անվանացանկի կազմում, սեմինարավարների ընտրություն	մայիս
3.	Ժամանակացույցի և ընթացակարգերի կազմում: Ստեղծագործական մրցույթի հայտարարում	մայիս
4.	Ըստ ժամանակացույցի՝ սեմինարի և ընթերցումների կազմակերպում	հունիս
5.	Ստեղծագործական մրցույթի արդյունքների ամփոփում	սեպտեմբեր
6.	Միջոցառումների համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերում	սեպտեմբեր
7.	Գործուղման կազմակերպում՝ Վանաձորում և Աշոցքում, համատեղ գեղարվեստական միջոցառման անցկացում: Էքսկուրսիա Լոռու մարզի պատմամշակութային վայրեր: Արարողակարգի անցկացում եկեղեցում:	հոկտեմբեր
8.	Ծրագրի ամփոփում՝ արդյունքների վերլուծում	հոկտեմբեր
9.	Որպես խրախուսանք՝ գործուղում պատմամշակութային վայրեր	նոյեմբեր
10.	Տեսանյութի, տեղեկատուի և հաշվետվության պատրաստում	նոյեմբեր

Ազդեցությունը և շարունակականությունը

Ծրագրի իրագործումը դրական ազդեցություն կունենա Շիրակի և Լոռու մարզերի դեռահասների և համայնքների միջև բարեկամական կապերի ամրապնդման, համախմբվածության գործընթացում: Կնպաստի դեռահասների գրագիտության բարձրացմանը, քրիստոնեական արժեքների պահպանմանը, կխթանվի նոր գիտելիքների ձեռքբերումը և տարածումը, որը կփոխանցվի հասակակիցներին: Ղևոնդ Ալիշանի թողած գրական ժառանգության ուսումնասիրումը հնարավորություն կտա արժևորելու հայազգի մեծերին: Թարգմանչաց տոնի կարևորությունը և գրերի գյուտի անհրաժեշտությունը, որպես ազգային ինքնության պահպանման գիտակցում, կնպաստի մայրենին անաղարտ պահելուն: Պատմամշակութային վայրերի պատմության և հայրենի բնաշխարհի վերահմաստավորմամբ կամրապնդվի մշակութային և հոգևոր արժեքների դերը հայապահպանման գործում: Մասնակիցների մեջ կզարգանա կազմակերպչական և թիմային կարողությունները:

Ազդեցությունն ապահովող մեխանիզմներն են՝ սեմինարները, բաց դասերը, ընթերցումները և բեմադրումը, ստեղծագործական մրցույթը, գրական-գեղարվեստական միջոցառումը, ճանաչողական էքսկուսիաները, համագործակցող կազմակերպությունների ներկայացուցիչների հաղորդած նոր գիտելիքները: Ծրագրի շնորհիվ մասնակիցների մեջ կձևավորվի հայկական մշակույթը կարևորելու, հիշարժան տոներին, նշանավոր անձանց հոբելյանական տարելիցներին շարունակաբար անդրադառնալու, նշելու և կարևորելու ավանդույթ:

Ծրագրի ազդեցության շարունակականությունը կապահովվի սոցիալական ցանցերի և հաղորդակցման այլ ձևերով, փոխադարձ այցերի և կրթամշակութային տարբեր միջոցառումների միջոցով, Գրողների միության և Հայագիտական կենտրոնների հետ համագործակցությամբ, որը կխթանի հայոց լեզվի նկատմամբ նորովի հետաքրքրությանը և լեզվամտածողության զարգացմանը:

ԾՐԱԳԻՐ

Տեսանելիությունը

Միջոցառումների տեսանելիությունը կապահովվի լուսաբանմամբ՝ կրթական կայքէջերում, «Կրթություն» շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում, Հայաստանի և Վրաստանի ՋԼՄ-ների միջոցով: Ծրագրի վերաբերյալ կպատրաստվի տեղեկատվական տեսանյութ և տեղեկատու, որոնք կտրամադրվեն նաև համագործակցող կազմակերպություններին: Տեսանյութը և տեղեկատուն կտեղադրվի entanik.am, You Tube կայքէջերում, facebook սոցիալական կայքում:

Համագործակցություն միջոցառման շրջանակներում

Համագործակցող կազմակերպություններն են՝ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունք, Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 և Աշոցքի միջնակարգ դպրոցներ, Գյումրու Սբ. Հակոբ Մծբնեցի եկեղեցի, Մատենադարան:

Ծրագրի իրականացման գործում համագործակցող կազմակերպությունները կապահովեն սաների և մանկավարժների մասնակցությունը միջոցառումներին, կտրամադրեն համապատասխան տարածքներ, կընտրեն իրենց կազմակերպության շնորհալի սաներին՝ համատեղ միջոցառումները բարձր մակարդակով անցկացնելու համար, ինչպես նաև կկազմակերպեն պատշաճ ընդունելություն: Առկա է համագործակցության հուշագրեր, նախնական պայմանավորվածություն, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում իրականացրած նմանատիպ ծրագրերի արդյունքների դրական արձագանքներ:

Միջոցառման մասնակիցները

- *Միջոցառման մասնակիցների ընդհանուր քանակը՝ 1180*

«Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի սաներ և մանկավարժներ՝ 430, Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 դպրոցի աշակերտներ՝ 400 , Շիրակի մարզի Աշոցքի միջնակարգ դպրոցի աշակերտներ՝ 200, Ջավախքի կրթամշակութային հաստատությունների դեռահասներ:

- *Միջոցառման մասնակիցների նկարագրությունը և ընտրության կարգը՝*

«Ընտանիք» կենտրոնի շնորհալի, տարբեր միջազգային, հանրապետական, մարզային մրցույթներին մասնակցած, արդյունքներ գրանցած, մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ ունեցող սաներ, մանկավարժներ, ստեղծագործական մրցույթին հայտավորված կրթամշակութային հաստատությունների դեռահասներ, Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 և Շիրակի մարզի Աշոցքի միջնակարգ դպրոցների աշակերտներ, մանկավարժներ: Ամփոփիչ փուլի մասնակիցների ընտրությունը կկատարվի միջոցառումների ակտիվ մասնակցության փաստով և տվյալ հաստատության տնօրինության առաջարկով:

Պատասխանատուներ՝ Ս. Պետրոսյան
Ա. Գրիգորյան
Ա.Մանուկյան

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան
«15» հունվարի 2021թ.

Անցկացման կարգ

«Ճանապարհ դեպի լույս» խորագրով միջոցառումների շարք՝ նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակի ծրագրի

1. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են՝
   - կարևորել Թարգմանչաց տոնի կարևորությունը,
   - ձևավորել քրիստոնեական արժեքների նկատմամբ հարգանք,
   - ծանոթացնել Ղևոնդ Ալիշանի կյանքին, գրական և գիտական գործունեությանը և հարուստ գրական ժառանգությանը,
   - հայ ժողովրդի հերոսական անցյալի օրինակով՝ Ալիշանի ազատասիրական և հայրենասիրական ոգու շունչն ու կորովը փոխանցել մատաղ սերնդին,
   - հարգանքի տուրք մատուցել «Քաղցրանվագ Նահապետին»,
   - կարևորել արտադպրոցական կրթության և դաստիարակության դերը
   - հաղորդակից դարձնել պատմամշակութային արժեքներին,
   - խթանել համագործակցությունը ծրագրում ընդգրկված կազմակերպությունների հետ:
2. Ծրագրի ղեկավարումը կազմակերպում և իրականացնում է «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ:
3. Ծրագիրն իրականացվում է մայիս - նոյեմբեր ամիսներին՝ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնում, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոում, Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունքում, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում և Շիրակի մարզի Աշոցքի մարզամշակութային կենտրոնում, Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցում:
4. Ծրագրի իրականացման հիմնական ուղղություններն են՝
   - Հայոց այբուբենին նվիրված ստեղծագործական մրցույթի հայտարարումը ՀՀ մարզերի և Ջավախքի կրթամշակութային կենտրոնների 13-18 տարեկան դեռահասների համար
   - «Ալիշանի կյանքը, գրական և գիտական գործունեությունը» խորագրով սեմինար և ընթերցումներ կազմակերպում Գյումրու հայագիտական կենտրոնում և Գրողների միությունում
   - «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով համատեղ գեղարվեստական միջոցառման և ցուցահանդեսի կազմակերպում Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում և Շիրակի մարզի Աշոցքի մարզամշակութային կենտրոնում, ճանաչողական այց Լոռու մարզի պատմամշակութային վայրեր,
   - «Ալիշանի աղոթքն առ Աստված» խորագրով արարողակարգի անցկացում Գյումրու Սբ. Հակոբ Մծբնեցի եկեղեցում
   - «Ճանապարհ դեպի լույս» խորագրով ցուցահանդես – միջոցառման իրականացում, ստեղծագործական մրցույթի հաղթողներին պատվոգրերի հանձնում:
5. Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին նվրված «Ճանապարհ դեպի լույս» խորագրով միջոցառումների շարքի ծախսերն իրականացնում է «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն ՊՈԱԿ-ը:
6. Ծրագրի շրջանակում համագործակցող կրթամշակութային հաստատությունները կխրախուսվեն շնորհակալագրերով:
7. Ստեղծագործական մրցույթի հաղթողների և միջոցառումների ակտիվ մասնակիցների համար որպես մրցանակ կկազմակերպվի այց Մատենադարան, Օշական, Սանահին վանական համալիր:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան
«15» հունվար 2021թ.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Ճանապարհ դեպի լույս» խորագրով միջոցառումների շարք՝ նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին

Հունիս-դեկտեմբեր 2021թ

Հ/հ	Իրականացվող գործողություն	Կատարման օր ամիս	Անցկացման /գործողության/ վայր	Թեմա	Պատասխանատուներ	Մասնակիցներ
Նախապատրաստական աշխատանքներ						
1.	Համագործակցող կառույցների հետ պայմանավորվածության ձեռք բերում, ստեղծագործական մրցույթի հայտարարում, հրավերների պատրաստում և ուղարկում	Հունիս-դեկտեմբեր	«Ընտանիք» կենտրոն		Տնօրենի տեղակալներ	
	Մասնակիցների անվանացանկի կազմում, սեմինարավարի ընտրություն				Տնօրենի տեղակալներ	
2.	Ստեղծագործական մրցույթի, սեմինարի և ընթերցումների համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռք բերում				Գնումների համակարգող	
3.	Գեղարվեստական միջոցառում-ցուցահանդեսի, հարմոնիումի նվագակցությամբ արարողակարգի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռք բերում					
4.	Եզրափակիչ փուլի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռք բերում					
1-ին փուլ						
5.	Ստեղծագործական մրցույթի հայտարարում	Հունիս 15	«Ընտանիք» կենտրոն	«Հայոց այբուբեն»	Տնօրենի տեղակալներ, կիր. աշխ. խմբ. համակ.	«Ընտանիք» կենտրոնի,Շիրակի մարզի և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների սաներ
6.	Սեմինար	Հոկտեմբեր 7	ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն	«Ալիշանի կյանքը, գրական և գիտական գործունեությունը»	Տնօրենի տեղակալ, սեմինարավար	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, գիտաշխատողներ, գրողներ,
7.	Ընթերցումներ	Հոկտեմբեր 12	Հայաստանի Գրողների Միության Շիրակի մարզային բաժանմունք			«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, գրողներ

2-րդ փուլ

8.	Ստեղծագործական մրցույթի ամփոփում	Հոկտեմբեր 15	«Ընտանիք» կենտրոն		Տնօրենի տեղակալ, կիր. աշխ. խմբ. համակ., մասնագիտական հանձնաժողով	Ստեղծագործական մրցույթի մասնակիցներ
9.	Համատեղ գեղարվեստական միջոցառում- ցուցահանդես	Հոկտեմբեր 16 Նոյեմբերի 17	Աշոցքի մարզամշակութային կենտրոն Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ	«Քաղցրանվագ Նահապետ»	Տնօրենի տեղակալ, գեղ. մասի վարիչ, կիր. աշխ. խմբ. համակ.,	«Ընտանիք» կենտրոնի և Աշոցքի մարզամշակութայի ն կենտրոնների սաներ, Լոռու տարածաշրջանայի ն պետական քոլեջի ուսանողներ, մանկավարժների արվեստագետներ, ծնողներ
10.	Ճանաչողական այց	Նոյեմբերի 17	Սանահինի վանական համալիր			«Ընտանիք» կենտրոնի սաներ, մանկավարժներ
11.	Հարմոնիումի նվագակցությամբ արարողակարգ	Հոկտեմբեր 27	Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցի	«Ալիշանի աղոթքն առ Աստված»	Տնօրենի տեղակալ, գեղ. մասի վարիչ խմբավարներ	«Ընտանիք» կենտրոնի սաների և Անի թաղամասի բնակիչներ, մանկավարժներ
12.	Եզրափակիչ միջոցառում ցուցահանդես, մրցույթ հաղթողներ և ակտիվ մասնակիցների պարգևատրում	Նոյեմբերի 22	«Ընտանիք» կենտրոն	«Ճանապարհ դեպի լույս»	Տնօրենի տեղակալ, գեղ. մասի վարիչ, կիր. աշխ. խմբ. համակ., խմբավարներ	«Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, ծնողներ, արվեստագետներ
13.	Ճանաչողական այց	Դեկտեմբերի 1	Արագածոտնի մարզի Տառերի պուրակ, Սաղմոսավանք, Մատենադարան, Օշական		Տնօրենի տեղակալ, գեղ. մասի վարիչ, խմբավարներ	Ստեղծագործական մրցույթի հաղթողներ, միջոցառումների ակտիվ մասնակիցներ, մանկավարժներ
14.	Ծրագրի վերաբերյալ տեղեկատուի, տեսանյութի, հաշվետվության պատրաստում	Դեկտեմբերի 10			Տնօրենի տեղակալ, տեխնիկ	

Տնօրենի ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքների գծով տեղակալ՝ Ս. Պետրոսյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սրբոց Թարգմանչաց տոնին նվիրված «Հայոց այբուբեն» թեմայով ստեղծագործական մրցույթի

Մրցույթի կազմակերպիչ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն:

Մրցույթի նպատակները և խնդիրները

- Արժևորել գրերի գյուտի կարևորությունն ազգային ինքնության պահպանման գործում
- Զարգացնել մասնակիցների ստեղծագործական միտքն ու կարողությունները
- Բացահայտել շնորհալի դեռահասներին
- Բարձրացնել արտադպրոցական կրթության դերը

Մրցույթին կարող են ներկայացնել աշխատանքներ հետևյալ ոլորտներից.

- կերպարվեստ /գրաֆիկա, գեղանկարչություն/
- դեկորատիվ-կիրառական արվեստ
- համակարգչային /սահիկահանդես/
- ռադիոէլեկտրոնիկա

Աշխատանքները կարող են լինել անհատական կամ խմբային:

Մրցույթի մասնակիցները

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ և Ջավախքի կրթամշակութային կենտրոնների 13-18 տարեկան դեռահասներ:

Մրցույթի մասնակիցները կդասակարգվեն հետևյալ տարիքային խմբերում.

- 13-15 տարեկան
- 15-18 տարեկան

Մրցույթի անցկացման կարգը

Մրցույթը անցկացվելու է երկու փուլով՝

- առաջին փուլում աշխատանքները ներկայացվելու են Էլեկտրոնային տարբերակով ՝ մինչև 2021-ի սեպտեմբերի 10-ը: Մասնագիտական հանձնաժողովի կողմից կընտրվեն լավագույն աշխատանքները:
- երկրորդ փուլում մասնակիցները ներկայացնելու են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցադրության համար: Ցուցահանդեսին ներկայացված աշխատանքների հեղինակներից կընտրվեն հիմնական և խրախուսական մրցանակակիրները:

Ստեղծագործությունների գնահատման հիմքերը

Գնահատման համար հիմք կանդիսանան հետևյալ չափանիշները՝

- տեխնիկական պահանջներին համապատասխանությունը /տես, «Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներ» կետը/,
- ստեղծագործական գաղափարը,
- գեղարվեստական կատարման յուրօրինակությունն ու որակը:

Աշխատանքների ներկայացման պայմանները

Առաջին փուլում աշխատանքների պատկերները ուղարկելիս կամ երկրորդ փուլում բնօրինակները ներկայացնելիս անհրաժեշտ է նշել.

- հեղինակի անունը, ազգանունը

- ստեղծագործության անվանումը
- տարիքը /խմբային աշխատանքի դեպքում մասնակիցների տվյալները/
- կրթական հաստատությունը
- դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը
- էլ. հասցեն, հեռախոսահամարը
- բնակության հասցեն:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջները

- Սահիկահանդեսի նվազագույն տևողությունը պետք է լինի 3 րոպե, առավելագույնը՝ 5 րոպե:
- Նկարները պետք է լինեն A2(420x594 մմ) կամ A3(297x420 մմ) չափի:
- Դեկորատիվ-կիրառական արվեստի, ռադիոէլեկտրոնիկայի աշխատանքների ձևաչափերին վերաբերող հատուկ պահանջներ չկան:

Աշխատանքները կարող են կատարվել ցանկացած նյութերով՝ ջրաներկ, գուաշ, ակրիլ, ածուխ, մետաղ, կավ, փայտ և այլն:

Պարգևները

Յուրաքանչյուր տարիքային խմբում մրցանակային տեղեր զբաղեցրած ստեղծագործական աշխատանքների հեղինակները կպարգևատրվեն պատվոգրերով և մրցանակներով:
Ստեղծագործական մրցույթի հաղթողները, ակտիվ մասնակիցները՝ որպես խրախուսանք, կայցելեն ՀՀ պատմամշակութային վայրեր:
Ծրագրի շրջանակում կկազմակերպվի մրցանակային աշխատանքների ցուցադրություն՝ «Ընտանիք» կենտրոնում, 2021-ի հոկտեմբեր ամսին /օրվա մասին կտեղեկացվի լրացուցիչ/:

Աշխատանքները ներկայացնել հետևյալ հասցեով.

Շիրակի մարզ, Գյումրի 3126,
Անի թաղամաս, 11 փողոց, 5/2
ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ
Հեռախոս /+374 312/ 6 64 07, 093 84 45 20
Էլ. հասցե՝ s.petrosyan@entanik.am կամ info@entanik.am
Մրցույթի հայտարարությունը տեղադրված է նաև www.entanik.am կայք էջում

ՀՐԱՎԵՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊՈԱԿ

ՏՆՕՐԵՆ

ГНО "ЭНТАНИК" ДЕТСКО-ЮНОШЕСКИЙ
ТВОРЧЕСКИЙ ЦЕНТР
МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

ДИРЕКТОР

"ENDANIK" YOUTH CREATIVE CENTRE
SNCO OF THE MINISTRY OF EDUCATION AND
SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

DIRECTOR

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի - 3126, «Անի» թաղամաս, 11փողոց, 5/2, Հեռ./Тел./Tel. (0312) 6-64-07, տնօրեն՝ (093) 40-35-32
РА, Ширакская область, г. Гюмри - 3126, "Ани" квартал, улица 11, 5/2 , 5/2, St. 11, "Ani" District, Gyumri - 3126, Shirak Region, RA
E-mail: 403532@gmail.com, info@entanik.am, www.entanik.am

N 023-21
17.05.2021թ.

«Աշոցքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի
տնօրեն տիկին Անահիտ Պապոյանին

ՀՐԱՎԵՐ

Հարգարժան տիկին Պապոյան.
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը մայիս-նոյեմբեր ամիսներին կազմակերպում է Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին նվիրված «Ճանապարհ դեպի լույս» խորագրով միջոցառումների շարքի ծրագիր:

Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են՝ արժևորել Թարգմանչաց տոնի կարևորությունը, ներկայացնել գրերի գյուտի անհրաժեշտությունն ազգային ինքնության պահպանման գործում, ձևավորել քրիստոնեական արժեքների նկատմամբ հարգանք, սերմանել հետաքրքրություն ընթերցանության նկատմամբ, մասնակիցներին ծանոթացնել պատմամշակութային վայրերի պատմությանը՝ կարևորելով մշակութային և հոգևոր արժեքների դերը հայապահպանման գործում, խթանել համագործակցությունը ծրագրում ընդգրկված կազմակերպությունների հետ:

Ծրագրի շրջանակում անցկացվելու է՝

- ստեղծագործական մրցույթ՝ «Հայոց այբուբեն» թեմայով նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին, ՀՀ մարզերի և Ջավախքի կրթամշակութային կենտրոնի դեռահասների համար,
- համատեղ միջոցառում «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 և Շիրակի մարզի «Աշոցքի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում,
- միջոցառում-ցուցահանդես «Ճանապարհ դեպի լույս» խորագրով, ստեղծագործական մրցույթի հաղթողների պարգևատրում «Ընտանիք» կենտրոնում,

Սիրով հրավիրում ենք Ձեր հաստատությանը մասնակցելու ծրագրին:
Խնդրում ենք մինչև մայիսի 27-ը հաստատել Ձեր հաստատության մասնակցությունը:
Կանխավ շնորհակալություն:
Կցվում է նաև ստեղծագործական մրցութի հայտարարությունը:

Հարգանքով՝ Արթուր Մինասյան

Կատարող՝ տնօրենի ուսումնադաստիարակչական
աշխատանքների գծով տեղակալ՝ Սվետլանա Պետրոսյան
Հեռ.՝ /093/ 84 45 20

ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ «Ընտանիք» ՄՊՄԿ ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝ Արթուր Մինասյանին

Տեղեկացնում ենք , որ ստացել ենք Ձեր կենտրոնի կողմից կազմակերպվող Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին նվիրված «Ճանապարհ դեպի լույս» խորագրով ծրագրի մասնակցության հրավերը, ողջունում ենք ծրագիրը և սիրով հաստատում ենք մեր հաստատության մասնակցությունը:

«Աշոցքի մարզամշակութային կոնտրոն» ՀՈԱԿ

Տնօրեն Ա. Պապոյան

08.10.21թ

ՀՀ ԿԳՄՄՆ «ԸՆՏԱՆԻՔ»
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ
Մուտք թիվ 73
«08» 10 2021 թ.

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ ԵՎ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ 201-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԻՆ ԵՎ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ 201-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆ» ԹԵՄԱՅՈՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

«ՔԱՂՑՐԱՆՎԱԳ ՆԱՀԱՊԵՏ».
ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

«ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

1.	Ինչպիսին՞ են տպավորությունները «Ճանապարհ դեպի լույս» ծրագրից: Ծրագիրը տվեց իրենց դրական էմոցիաներ, տպավորություններ: Հոգեբուժարանը իրենց դուր եկավ երգեհոնային կատարումները:
2.	Ի՞նչ նոր գիտելիքներ ստացաք Սրբոց Թարգմանչաց տոնի և Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական կյանքից: Երբեմն անհայտ են այս ծրագրի միջոցով Սրբոց Թարգմանչաց տոնի մասին ավելի շատ տեղեկություններ ստացաք, Ղևոնդ Ալիշանի գործունեությանը էլ ավելի ընդգծված հետաքրքրվեց
3.	Ինչքանո՞վ հետաքրքրեցին ձեզ «Ընտանիք» կենտրոնի սաների գեղարվեստական ելույթները: Գեղարվեստական ելույթները դրական՝ հետաքրքիր էին, հաղթեցին ճաշակով, հագուստ կատարումներ, մեկ հնչած երաժշտություն, ինչը շատ հաճելի էր:
4.	Ի՞նչ առաջարկություններ ունեք: Կարելուց ավելի հաճախակի դեր կենդրոնում ապրելի մեր հանդիպել, մեզի էլ հնարավորություն կտրվեր լսել, ծանոթանալ ապրելու հոգևոր արժեքների մասին. ավելի մասնակցել: Հարգանքով մեզ Զեր

Անուն Զոհրաբ

Ազգանուն Գրիգորյան.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

« ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

1.	**Ինչպիսին՞ են տպավորությունները «Ճանապարհ դեպի լույս» ծրագրից:** Ծրագիրը գրավիչ է, մեկ բառով ներկայացնի չեմ։ Դեռևս բան շատ հետաքրքիր է։
2.	**Ի՞նչ նոր գիտելիքներ ստացաք Սրբոց Թարգմանչաց տոնի և Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական կյանքից:** Իհարկե ստացա նոր գիտելիքներ։ Ես նշակի ֆրանսերեն է, որի շրջանակներում մենք դեռահասներս ավելի նեղ ծանոթացանք մեր հոգևոր մշակութային ավանդներին և հայ գրագիտության կարևոր ներդրումը գրագիտության մեզ
3.	**Ինչքանո՞վ հետաքրքրեցին ձեզ «Ընտանիք» կենտրոնի սաների գեղարվեստական ելույթները:** Ֆեյսբուքյան էջերս շատ հետաքրքիր է։ Իհարկե գրավիչ խմբագրում, հետաքրքիր նյութերով լցված։
4.	**Ի՞նչ առաջարկություններ ունեք:** Ամեն ֆրանսերեն հանդիպում կազմակերպեք առավել ևս հանդիպումներում։

Անուն Իրաֆելյա

Ազգանուն Զաքարյան

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

«ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

1.	Ինչպիսին՞ են տպավորությունները «Ճանապարհի դեպի լույս» ծրագրից: Տպավորություններս անբացատրելի են: Իրազեկի երգչախումբը ունեմ: Ծրագիրը շատ դաստիարակչական է և կրթական:
2.	Ի՞նչ նոր գիտելիքներ ստացաք Սրբոց Թարգմանչաց տոնի և Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական կյանքից: Սրբոց Թարգմանչաց տոնի մասին չգիտեի, բայց հետաքրքիր հոգևոր մշակութային ավանդների մասին, դեռը շատ կարևոր էր: Ղևոնդ Ալիշան մասին դասագրքից միայն տեղեկություններ գիտեի, այժմ ավելին իմացա:
3.	Ինչքանո՞վ հետաքրքրեցին ձեզ «Ընտանիք» կենտրոնի սաների գեղարվեստական ելույթները: Գեղարվեստական ելույթները տեսնում-տեսնում սիրուն էին, երգչախումբը շատ լավն էր, ես էլ մեծ հաճույքով մի կլինեի ու կմասնակցեի նման ծրագրի:
4.	Ի՞նչ առաջարկություններ ունեք: Ձեր ծրագրերի իրականացմանը մեզ չնորհակալ, տենամ մեզ էլ հիշեք ապագայում եթե, որովհետև շատ կարևոր դաստիարակչական ծրագրեր ունեք: ☺

Անուն Գևորգ

Ազգանուն Կիրակոսյան.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

«ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

1.	Ինչպիսին՞ են տպավորությունները «Ճանապարհ դեպի լույս» ծրագրից: Ճանապարհ դեպի լույս ծրագրից տպավորությունները անշուշտ դրական են:
2.	Ի՞նչ նոր գիտելիքներ ստացաք Սրբոց Թարգմանչաց տոնի և Ղևոնդ Ալիշանի ստեղծագործական կյանքից: Սրբոց թարգմանչաց տոնի հոգևոր արմատների կարևորությունն ցանկանում եմ գրելի գյուտի և Ղևոնդ Ալիշանի կարևոր դերակատարումը հայ գրականության զարգացման մեջ:
3.	Ինչքանո՞վ հետաքրքրեցին ձեզ «Ընտանիք» կենտրոնի սաների գեղարվեստական ելույթները: Զգեշարվեստական ելույթները սիրուն էին, դրանք ներկայացվում էին հոգևոր ճշակույթին բարձր արժեքներով:
4.	Ի՞նչ առաջարկություններ ունեք: Ծրագիրը բավական կարևոր և մեր համայնքի դրական բերդական:

Անուն Դիլա

Ազգանուն Հասանյան

ՀՀ ԿԳՄՍՆ
«Ընտանիք»
ՄՊՍ Կենտրոն

«ԸՆՏԱՆԻՔ»
բարեգործական
ՀԿ

ՄԵՐ ՄԱՍԻՆ | ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ | ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՑՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԳԼՈՒՄՆԵՐ | ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ | ԿԱՊ

Քաղցրանվագ Նահապետ» խորագրով համատեղ գրական-գեղարվեստական միջոցառում Աշոցքում

«Ճանապարհի դեպի լույս» խորագրով միջոցառումների շրջանակում «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաներն ու մանկավարժները Շիրակի մարզի Աշոցքի մարզամշակութային կենտրոնում անցկացրեցին «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով համատեղ գրական-գեղարվեստական միջոցառում՝ նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին:

19/10/2021

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» ՄՊՀ Կենտրոն

«ԸՆՏԱՆԻՔ» բարեգործական ՀԿ

ՄԵՐ ՄԱՍԻՆ | ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ | ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԳԼՈՒԽՆԵՐ | ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ | ԿԱՊ

«Ճանապարհ դեպի լույս» խորագրով ծրագրի ամփոփիչ միջոցառում

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ն ամփոփեց «Ճանապարհ դեպի լույս» խորագրով ծրագիրը: Ծրագիրն ամբողջությամբ նվիրված էր Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակին: ՀՀ Լոռու, Արագածոտնի, Շիրակի մարզերում, ինչպես նաև Ջավախքի կրթամշակութային կենտրոնի դեռահասների համար հայտարարվեց Հայոց այբուբենին նվիրված ստեղծագործական մրցույթ՝ ըստ կիրառական արվեստի ճյուղերի, կազմակերպվեց սեմինար և ընթերցումներ «Ալիշանի կյանքը, գրական և գիտական գործունեությունը» խորագրով: Կրթական ծրագիրը նպաստեց դեռահասների գրագիտության բարձրացմանը, քրիստոնեական արժեքների պահպանմանը: Ղևոնդ Ալիշանի թողած գրական ժառանգության ուսումնասիրումը հնարավորություն տվեց դեռահասներին արժևորելու հայազգի մեծերին: Թարգմանչաց տոնի կարևորությունը և գրերի գյուտի անհրաժեշտությունը, որպես ազգային ինքնության պահպանումն ավելի խորը ու բովանդակալից ներկայացվեց սաներին, ինչը դեռահասների մեջ սերմանեց հետաքրքրություն ընթերցանության և Ալիշանի գրական ժառանգության հանդեպ՝ նպատակն ունենալով սերունդներին կրթել Սրբոց թագմանչաց վարդապետների օրինակով: Ծրագրի շրջանակում Գրողների միության և Հայագիտական կենտրոնների հետ համագործակցությունն էլ իր հերթին նպաստեց հայոց լեզվի նկատմամբ դեռահասների հետաքրքրությանն ու լեզվամտածողության զարգացմանը: Մայիսից մեկնարկած ծրագիրն , ամփոփվեց «Ընտանիք» կենտրոնում՝ «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով գրական-գեղարվեստական միջոցառմամբ, և կազմակերպվեց ստեղծագործական մրցույթի և «Ընտանիք» կենտրոնի կիրառական արվեստի խմբակների սաների աշխատանքների ցուցադրություն: Լավագույն աշխատանքների հեղինակներին կենտրոնի տնօրեն՝ Արթուր Մինասյանը պատվոգրեր շնորհեց, ինչպես նաև ստեղծագործական մրցույթի հաղթողները, ակտիվ մասնակիցները՝ որպես մրցանակ, այցելեցին Հայոց Այբուբենի հուշարձան՝ Տառերի պուրակ և Սաղմոսավանք, Մատենադարան, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Ծրագիրն ամփոփվեց Գյումրու Սբ Հակոբ Մծբնեցի եկեղեցում՝ «Ալիշանի աղոթքն առ Աստված» հարմոնիումի նվագակցությամբ արարողակարգով:

01/12/2021

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Տրվում է

Ախալքալաքի և Նինոծմինդայի երիտասարդական
կրթամշակութային կենտրոններին ի դեմս տնօրեն՝
ԿԱՐԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ
Սրբոց Թարգմանչաց տոնին նվիրված
«Ճանապարհ դեպի լույս» ծրագրի շրջանակում
«Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի հետ համագործակցելու համար:

Տնօրեն Ա. Մինասյան

22.11.2021 թ.

ՊԱՏՎՈԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

ՊԱՏՎՈԳԻՐ

Տրվում է
Ախալքալաքի երիտասարդական կրթամշակութային կենտրոնի
Դեկորատիվ կիրառական արվեստի խմբակին՝ ի դեմս խմբավար
ԵԼԵՆԱ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ
Սրբոց Թարգմանչաց տոնին նվիրված
«Ճանապարհ դեպի լույս» ծրագրի շրջանակում
«Հայոց այբուբեն» խորագրով ստեղծագործական
մրցույթում /12-18 տարիքային խումբ/
I տեղ զբաղեցնելու համար:

Տնօրեն՝ Ա. Մինասյան

22.11.2021 թ.

ՊԱՏՎՈԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

ՊԱՏՎՈԳԻՐ

Տրվում է
Նինոծմինդայի երիտասարդական կրթամշակութային կենտրոնի
գործադիր մարմնի խմբակին՝ ի դեմս խմբավար
ԼԱԼԱ ՇԱՀԲԵԿՅԱՆԻ
Սրբոց Թարգմանչաց տոնին նվիրված
«Ճանապարհ դեպի լույս» ծրագրի շրջանակում
«Հայոց այբուբեն» խորագրով ստեղծագործական
մրցույթում /12-18 տարիքային խումբ/
I տեղ զբաղեցնելու համար:

Տնօրեն՝ Ա. Մինասյան

22.11.2021 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան
„15" դեկտեմբերի 2021թ.

Հաշվետվություն

«Ճանապարհ դեպի լույս» խորագրով միջոցառումների շարք՝ նվիրված Սրբոց Թարգմանչաց տոնին և Ղևոնդ Ալիշանի 201-ամյակի

Միջոցառման համառոտ նկարագրությունը

1-ին փուլ. ՀՀ մարզերի և Ջավախքի կրթամշակութային կենտրոնի դեռահասների համար հայտարարվեց «Հայոց այբուբեն» խորագրով ստեղծագործական մրցույթ: Կազմակերպվեցին սեմինարներ և ընթերցումներ «Ալիշանի կյանքը, գրական և գիտական գործունեությունը» խորագրով Շիրակի մարզային գրադարանում և ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքում:

2-րդ փուլ. Անցկացվեցին «Քաղցրանվագ Նահապետ» խորագրով համատեղ գրական-գեղարվեստական միջոցառումներ Շիրակի մարզի Աշոցքի մարզամշակութային կենտրոնում և Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում: Կազմակերպվեց ճանաչողական այց Լոռու մարզի պատմամշակութային վայրեր՝ Սանահինի և Հաղարծինի վանական համալիրներ:

Ամփոփվեց ստեղծագործական մրցույթի արդյունքները ըստ մշակված ընթացակարգի:

Կենտրոնի սաների և Անի թաղամասի բնակիչների համար Գյումրու Սբ. Հակոբ Մծբնեցի եկեղեցում հարմոնիումի նվագակցությամբ անցկացվեց արարողակարգ՝ «Ալիշանի աղոթքն առ Աստված»:

Եզրափակիչ փուլ. Ծրագիրն ամփոփվեց ստեղծագործական մրցույթի լավագույն աշխատանքների ցուցադրմամբ, համայնքների և կենտրոնի սաների համատեղ «Ճանապարհ դեպի լույս» խորագրով գեղարվեստական միջոցառմամբ, իսկ համագործակցող կազմակերպություններին և ակտիվ մասնակիցներին հանձնվեցին շնորհակալագրեր և պատվոգրեր:

Ծրագրի ակտիվ մասնակիցները՝ որպես խրախուսանք այցելեցին Մատենադարան, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:

Միջոցառումները լուսաբանվեցին entanik.am կայքէջում, facebook սոցիալական կայքում: Ծրագրի վերաբերյալ պատրաստվեց տեսանյութ և տեղեկատու:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները

- Կարևորել Թարգմանչաց տոնի կարևորությունը
- Ձևավորել հարգանք քրիստոնեական արժեքների նկատմամբ
- Ծանոթացնել սաներին Ղևոնդ Ալիշանի կյանքին, գիտական գործունեությանը և հարուստ գրական ժառանգությանը
- Հայ ժողովրդի հերոսական անցյալի օրինակով՝ Ալիշանի ազատասիրական և հայրենասիրական ոգու շունչն ու կորովը փոխանցել մատաղ սերնդին
- Հարգանքի տուրք մատուցել «Քաղցրանվագ Նահապետ»-ին
- Խթանել համագործակցությունը ծրագրում ընդգրկված կազմակերպությունների հետ
- Դեռահասներին հաղորդակից դարձնել պատմամշակութային արժեքներին
- Կարևորել արտադպրոցական կրթության և դաստիարակության դերը

Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցներ/ թիվը

- «Ընտանիք» կենտրոնի սաներ, մանկավարժներ՝ 450
- Աշոցքի մարզամշակութային կենտրոն մանկավարժներ, սաներ, ծնողներ՝ 250

ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

2021